

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՏԱՐԱԳԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

(ԺԴ. ԳԱԱԲ.)

1. Մխիթար Ակնռացին մէկն է ԺԳրդ գառու մեր մատենագիրներէն, և մէկը նաև այն գանուկուններէն, որ սառաւթար ՍԿԵՇԱ-  
ՄԱ- տարնեցին Սկնռայի վան-  
ՑԻՆ ՊԱՏՏՈՆ ԵՒ քին զարգացման: Ինքն ԳԻՐՔԸ իրբեւ Կիլիկեան արքու-  
նիքի մարդ, ուղիկից եղաւ 1254'ին Հե-  
թում Ա. Ռ. գէպի Թաթարիստան: Մխիթա-  
րի գրուածքներէն մէկի հասած է Յաղաց Համապատուորեան Երկուսամե Սումելոց «  
Խորագրով գործ մը, որ 1860'ին է տաղա-  
րուած Վանուց Տպարանին մէջ: Այդ գոր-  
ծը տեղեկազբութիւն մըն է այն պատուի-  
րակութեան պաշտօնին, զոր ստանձնած էր  
Մխիթար՝ Բարձրերգցի Կոստանդին Կա-  
թողիկոսէն, երթալ Պաղումայիս (Աքեա) և  
յանուն կաթողիկոսին յարզանքներ  
մատուցանել պապի Լեկաղին, որուն  
քով արդէն փոթացիր էին Հայ ար-  
քունիքի պաշտօնեայք: Լեկաղը, նախ  
լու ընդունելութիւն մը չէ ըրած Հայոց  
կաթողիկոսի պատուիրակութեան. բայց  
յետոյ զիջանելով՝ ընդունած է Ակնռացին  
և իր ընկերները. և յետոյ հարցումներ  
ուղղած է դաւանական և Աթոռական խըն-  
դիրներու մասին, իմանալ ուզելով Հայ  
Եկեղեցւոյ դաւանութիւնը: Մխիթար ճար-  
տարութեամբ և Ա. Գրոց վկայութիւննե-  
րով տուած է հարկ եղած պատասխաննե-  
րը, զորս յետոյ զրի առած է Հեթումթա-  
գաւորին առաջարկով և Կաստաղոնի Յա-  
կոր Եպիսկոպոսին յորգորումով, ինչորէս  
կը կարգանք իր գրքոյին սկիզբը: Մրիւ-  
թար իր գործին վերջն ալ գրած է Հեթու-  
մի ուզելալ ոստանաւոր ընծայական մը:  
Մխիթարի գործին բովանդակութեան մո-  
սին խօսիլ գուրս կը մնայ մեր նպատակէն.  
մինք միայն պիտի պալ զենք Մխիթարի  
գիրքին այն տողերը, որ կը վերաբերին  
մեր այս յօդուածի վերնագրին:

2.— Ակնռացին՝ Երուսաղէմի տարա-  
գիր Եպիսկոպոսին նկատմամբ կուտայ (էջ  
7-10) շահեկան տեղեկութիւններ, նախ

յիշելով պատուիրակութեան թուականը,  
և եւ եղեւ այս ի Հայրապետութեան Հայոց  
կոստանդեայ քառասո-  
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ներորդ երկրորդ ամին,  
«ՍԵՐԱՍԵՐ» և ի թագաւորութեան  
ԵՊԻՍԿՈՊՈՍ Արամեան տոհմիս Հե-  
թումյա: Կոստանդին Բարձրերգցին զահա-  
կալած է 1220'ին, հետեւարար այս պատ-  
ուիրակութիւնը կատարուած կ'ըլլայ 1262  
ին: Սկեւուացին՝ յետոյ իր ճամբորգութեան  
մասին կը զրէ. «Եւ զի ձմեռնացին էր ժա-  
մանակի և բազում աւուրս ծանրանաւելք,  
հազիւ հասաք մերձ ի յել Դեկտեմբերի ամ-  
սոյ ի քաղաքն Աքայեա՝ ընդ մեզ ունելով նը-  
րամանա Կարողիկոսին մերոյ զեփիսկոպոսն Ե-  
րուսաղիկի գմենան գտնալ ի Տրայիանուպո-  
շիս»: Այս խօսքերէն կը հասկցուի թէ  
Ակնռացին ճամբորգութեան ժամանակ,  
Տրայիանուպօլիս մէջ կը գտնուէր Երու-  
սաղէմի Հայոց Եպիսկոպոսը, որուն հայազ-  
գի ըլլալը կը հաստատուի «մերասեռ» բա-  
ռաէն: Տրայիանուպօլիս՝ հին Սիլինոսն է, ի-  
սաւրիոյ թեմին մէջ, ծովեղերքէն կէս ժամ  
հոռի, հո՞ն մեռած է Տրայիանոս կայորը՝  
117'ին, և հո՞ն անոր մահարձան մը կա-  
ռուցուած է: Սկեւուացին՝ խօսքի ընթաց-  
քէն կ'երեւի որ պատուիրակութիւնը Տր-  
րայիանուպօլուոյ մերձակայ մէկ նաւահան-  
գիստէն, հաւանարար Ատալիային, ճամ-  
բոյ ելած՝ և Երուսաղէմի Եպիսկոպոսը  
գտած է Տրայիանուպօլիս մէջ և իրեն ըն-  
կերացուցած, և կամ Սէլէֆքէն նաւ  
նատելով պատահած են Սիլինոս, Կիպրո-  
սի գիմացը, և յետոյ ճամբորգութիւնը շա-  
րունակած զէպի Պաղպամայիս: Պատուիրա-  
կութիւնը, ինչպէս ըսինք, Լեկաղէն բա-  
ւական գժկամակութիւն տեսնելէ, յետոյ,  
Երուսաղէմի Եպիսկոպոսին հետ կը ներ-  
կայանայ անոր, կը մատուցանէ Կաթողի-  
կոսին նամակը և ընծաները, Լեկաղը կ'ըս-  
պատէր Կաթողիկոսին այցելութեան. այդ  
պատճառաւ կը զայրանայ և կը մերձէ  
ընծաները, Երուսաղէմի Եպիսկոպոսին կու-  
տայ նամակը և հեգնութեամբ կ'ըսէ անոր.  
«Դո՞ւ ընթերցիր զայր»: և երբ ա՞ն կ'ըս-  
կամի կարգալ, Լեկաղը թոյլ չի տար տ-  
ւարտելու:

Երուսաղէմի «մերասեռ» անանուն հ-  
պիսկոպոսը այսչափ միայն կը յիշուի Սկե-  
ւուացին՝ յիշեալ գրքին մէջ, մը էր ան:

ձանչնալու համար զանի, պէտք պիտի ըլլայ զիտնալ, նոյն թուականին, Ախերիոյ և Պաղեստինի բաղամական կացուրինը և անոր նիշեւանը, ուրկէ յառաջ եկած է Երրուսաղեմի եպիսկոպոսին տարագրութիւնը:

Յ.— Սալահատինի յազբութենէն յետոյ, Խատինները կ'իշխէին միայն ծովեցերկայ քաղաքաց պատշաճական սականալ զի և ակի մը կատութեաւը մէջ. Էյուպեան հարցատութեան յաջորդներէն,

Մէլէք-էլ-Քւամիլ ներքին խնդիրներու պատճառաւ, իր իշխանութիւնը տկարացած զգալով՝ 10 տարուան համար, եափայի դաշնադրութեամբ (1229), կը կապուի Ֆրէտէրիկ Բ. կայսեր հետ, և Եղիպտոսը Սրեւմտեան ազգերու յարձակութերէն զերծ կացուցանելու պայմանաւ, Ֆրէտէրիկ կայսեր կը յանձնուէին Երուսաղէմ, Բեթղեհէմ և Նազարէթ քաղաքները, Աքեա տանող ճամբաններով և զիւղերով: Ֆրէտէրիկ կայսեր այս սակաւատեւ իշխանութիւնը մեծապէս տկարացաւ, Արւրիական լատին ստացութեանց մէջ զբանուած քրիստոնէից պառակտումէն և Մոնղոլիաներու արշաւանքէն. վասն զի 1258'ին, Թաթար զօրապետ Հուլազու խան, ահազ բանակով մը Պաղտատը զբաւելէ վերջ, արշաւց Հալէպ և Գամասկոս: Այս երկու քաղաքները տանելէ Ետքը (1260), Թաթար բանակը յառաջացաւ դէպի Ա. Երկրին կեղրոնը. բայց Մանկու խանին մահուամբ, Հուլազու ստիպուեցաւ ևս զառնալ, և Քիլպողայ զօրապետին հրամայեց որ բաւականաշափ զինուորներով շարունակէ իր արշաւանքը: Այս միջոցին, Եղիպտոսի Սուլթանութիւնը կ'սասանձնէր իշխներէն մին բուտուզ, որ Պիպարս ըսուած զօրապետը զրկեց՝ Ախերիոյ կողմէրը Մանկուներուն արշաւանքը կասեցնելու համար: Պիպարս, Այս ձալուտի մէջ, ո'չ միայն ուշնացուց Քիմպողայի բանակը, այլ նաև յաջողեցաւ Եղիպտոսի Սուլթանութեան գահը բարձրանալ: Ան միահեծան տէր դարձաւ Ախերիոյ և Պաղեստինի, և վերջ տալով Եյուպեանց հարստութեան, հաստատեց Մէմլուքներու իշխանութիւնը՝ որ տէրեց զրեթէ երկու գար: Հուլազուի այս արշաւանքները առթիւ պիտի միացներէն կ'առաջնական է. 1727'ին. Դակա վեդ. Խարեւդյան, զօրձակցութեամբ Պալտէց Մաղամիս դպի: Այս եկինաւ ձեռապիւն օրինակ մը կայ Ա. Արտիս Մատնադարանին մէջ: (Թ. 404 և 453):

Իիպի. ըստ Հեթում պատմչի (էջ 47), Հայոց Հեթում թագաւորը՝ իր բազմաթիւ զօրագունդերով՝ միացած էր Պիպարսին Առաջի մէջ, և Միջազհաքէն մինչեւ Ախերիոյ անոր արշաւանքին կը մասնակցէին Հայկական զունդեր, որովհետեւ մասնաւոր զաշնազբութեամբ մը կապուած էին, Կիլիկիան սահմաններուն ապահովութեան համար: Հեթում Ա. այս զունդերէն զատ Զամշէան կը զրէ թէ (Պամ. Հայոց, Գ. 256) Հուլազուի բանակին կ'ընկերանային Արեւելցից Հայ զինուորականները, ինչպէս Շահնշահի որդին՝ Զաքարիա իշխանը, Արմերատ Ուոպելեան, Խեւազ Խաչինեցին և Բագրատունի Թաղիադին իշխանները: Այս Հայ զօրագունդերուն քաջազործութիւններն և Հեթումի անտեսական կորւներն Պիպարսի արշաւանքներէն չկրցին ազատ պահէլ մեր ցանկալի կիլիկիան:

4.— Էլ-Մէլէք-բիւքն-էտ-տին Պիպարս էլ Պընտրքար, (1260-1277) Թաթարական բանակը նուաճելով՝ այլ ԱՅՍ ԿԱՑՈՒԹԵԱՆ ևս երկիւզ մը չունէր ՀԵՏԻՆԱՆՔԸ Ախերիոյ քրիստոնէից ոյժերէն. և սկզաւ նեղել զանոնք, ևս պատճել այն իշխանները և նեղեղցականները որ ոյժ տուած էին Հուլազուի և Հեթումի զօրագունդերուն և գիւրացուցած էին անոնց արշաւանքը: Պիպարս երկրին տիրանալով՝ կը քանզէր բոլոր ամրութիւններն ևս կը հեռացնէր նաև Ա. Երկրէն քրիստոնեանները և աղդեցիկ եկեղեցականները, որոնց մէջ կը զանուէին Առաջնորդները և Պատրիարքները: Մարինոս լատին պատմիչը իր «Ա. Երկրի Պատմութեան» մէջ<sup>(\*)</sup> (Հատ. Ա. էջ 25), կը յիշատակէ թէ՝ նոյն միջոցներուն Խուափիւսու լատին եպիսկոպոսին հետ, աքսորուած են նաև Յակոբոս, Բանդակիոն և Թովման անուն եկեղեցականները և որ յետոյ վերապարձած են: Մարինոսէ առնելով՝ Երուսաղէմի միարան Բառնարաս վրդ. Գանձակեցին ալ, իր «Յաջորդուրիւն» Պատիարքաց Երուսաղէմից զրքին մէջ (էջ 40), կը յիշէ Ա. Յակոբայ զահակալ Յակոբոս

(\*) Մարինոսի այս պատմութիւնը Խայելենի Հայեցին բարգմանած է. 1727'ին. Դակա վեդ. Խարեւդյան, զօրձակցութեամբ Պալտէց Մաղամիս դպի: Այս եկինաւ ձեռապիւն օրինակ մը կայ Ա. Արտիս Մատնադարանին մէջ: (Թ. 404 և 453):

ևպիսկոպոսին տարագրութիւնը, և նոյն ևպիսկոպոսին Ս. Աթոռոյ յաջորդութեան, իբր աղքիւր, ցոյց կուտայ ա՛յն «Բ. յիշատակարան»ը որ, ըստ իր «յառաջարան»ին, արարական պատմութեանց և այլ յիշատակարանաց հաւաքածոյ մ՛է, «Ժողովակալ ՚ի ձեռն Երուսաղեմացոյ մերավեայ ուրումն բարեկայշի»: Այս «Բ. յիշատակարան»ին ծանօթագրութենէն կը հասկցուի ուրեմն որ Բառնարաս զրդ: Յակորոս և պիսկոպոսին յաջորդութեան և տարագրութեան վերաբերեալ տեղեկութիւն մը քաղած ու յիշած է իր զրբին մէջ, թէև մենք չենք կրցած ձեռք բերել այդ «Բ. յիշատակարան»ը:

Ըստ Մխիթար Սկեռաց: ոյն, Երուսաղէմի «մերասեռ» ևպիսկոպոսի մը զոյութիւնը և 1262'ին, պատուիրակութեան մը անդամակցութիւնը, ինչպէս տեսանք, կը հաստատուի պատմականութիւն: Նկատի առնելով Հայ և Մոնղոլ գաշնակից բանակներուն, 1258'ին, կատարած արշաւանքին հետեանքով յառաջ նկատ համաքրիստոնէական հաւածանքը և Առևլթան Պիտարուի ըրած տարագրութիւնները և Մարինոսի կողմէն Երուսաղէմի Յակորոս ևպիսկոպոսի մը յանուանէ յիշատակութիւնը, իբր մին՝ այն թուականի աքսորեալներէն — ինչպէս նաև Բառնարաս զրդ: ի տեսած ու կարդացած «Բ. յիշատակարան»ը, կը համարձակինք Եղբակացնել թէ Մխիթար ըՄկեռացիին «Երուսաղեմայ մերանեն ևպիսկոպոսը պէտք է նոյնացնել Մուրը Աթոռոյ 1260'ի գահակալ Յակորոս ևպիսկոպոսին հետ, թերեւ վաղածանօթ մը կոստանդինի կաթողիկոս Բարձրերգցիին, որ, 1238'ին ուխտաւորութեամբ այցելած էր արդէն Ս. Տեղեաց:

Այսպէս՝ յիշատակարաններն են որ ի յայտ կը բերեն մեզ Ա. Յակորայ վաղեմի զաւակներէն մին՝ որ, իսկը Հայ Եկեղեցւոյ և Ա. Աթոռոյ, կը քամէ տարագրութեան զառն բաժակր և սիրով կը տանի ա՛յն տաճանելի կեանքը՝ զոր ապրեցաւ Մինոսի հոռովմէական աւելակաց մէջ:

**ՄԿՐՏԻՉ ԵՊՈ. ԱՂԱԽՆՈՒՅՆԻ**



## ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄՔ

ՈՎ. ԵՆ GEORGES MECKLAIM

ԵՒ JACOB DE JAVIGY

«Թրանսանայ Տարեգիրք» ի 1927 տարուոյ հատորին մէջ շահեկան ուսումնասիրութիւնն մը կար «Հայերու վարժարամ մը Փարիզ երկությունի դար առաջ » խորագրով:

Այդ վարժարանը, հիմնուած էր 1689 ին Լուի Ժ. կ օրով, անոր մեծ նախարար Գուլուպէի նախաձեռնութեամբ, և կը կոչուէր Էկու դե լանդարտուութիւններու կամ Հայերու:

Անոր նպատակն էր Արևելքի մէջ ֆրանսական շահերը պաշտպանելու համար հասցնել թարգմանները: Ֆրանսացի տղաք հան պիտի սորվէին Թուրքերէն, Արաբերէն և Պարսկերէն, իսկ Արևելքի տղաք՝ Ֆրանսներէն: Հարկ գատուած էր նաև սորվեցնել Յունարէն, Իտալերէն, նոյն իսկ Սպանիերէն (Արևելքի Հրեաներուն լեզուն) և այն ատենուան միջազգային լեզուն, Լատիներէնը: Ասկէ զատ թարգմանները քանի որ ստիպուած էին զատարաններու առաջ վաստարանի զեր կատարելու, պէտք էր ծանօթանացին առևտրական իրաւագիտութեան, ինչպէս նաև ընդհանուր կարգ մը ծանօթութիւններու, պատմութեան, աշխարհագրութեան, բնական գիտութեանց ու բժշկական ծանօթութիւններու, երկրաշափութեան, մաթեմատիքի և գծագրութեան:

Կրթութիւնը բոլորովին ձրի էր և պետութիւնը կը հոգար բոլոր ծախքերը:

1669 ին վարժարանը կը հաստատուէր Կ. Պոլիս, Բերա, Քափուշին կրօնաւորներու վարչութեան տակ, Լուի - Լը - Կրան Գոլէմին մէջ, ուր կ'ընդունուին միայն ոչ ֆրանսացի Արևելցիներ:

1700 էն 1720 այդ վարժարանը կ'ունենար իր կրկնակը Բարիդ: Ճիկութիթներու վարչութեան տակ, Լուի - Լը - Կրան Գոլէմին մէջ, ուր կ'ընդունուին միայն ոչ ֆրանսացի Արևելցիներ:

1721 էն յետոյ այլևս Արևելցիներ չընդունուեցան և վարժարանը քանի ձևափոխութիւններէ յատայ, 1873 ին վերջնապէս